



## ԳԻՏԵԼԻՔ-ՄԱՍՍԱՅԻՆ

Ա. Կ. ՖԻՐՍՈՎ  
ՍՏԱԼԻՆԵԽԱԹ ՏՐԵՍՏԻ  
ՀՈՐԱՓՈՐ ՎԱՐՊԵՏ

ԳԱՐԱՎԱՆԱՆ - ԻԶԵՑՄԱՆ  
Ո Պ Ե Ր Ա Յ Տ Ա Ն Ե Ր Ի  
Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ  
Հ Ո Ր Ա Փ Ո Ր Մ Ա Ն Մ Ե Զ

ԱՐԴ. Պ. Գ. Տ. Հ. ԲԵՆՎՈՐ ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱԳԻԿԻ ԿԱՐԻՆԵՑ

$$\begin{array}{r} \underline{622} \\ - 65 \\ \hline \end{array}$$



ՄԳ-84 - ԾԱ.ԺԿ - Ա.ԴՐՊՊ-84  
ԲԱ.ԴԱՒ - 1939 - ՄՈՍԿՎԱ.

ԳԻՏԵԼԻՔԸ - ՄԱՍՍԱՅԻՆ



622  
5-65

Կ

Ա. Կ. ՖԻՐՍՈՎ  
ՍՏԱԼԻՆՆԵՎՐ ՏՐԵՍԻ ՀՈՐԱՓՈՐ ՎԱՐՊԵՏ

ԱՐԴ. Պ. Գ. Տ. ԲԱՆՎԱՐ ՀԵՂԻԿԱԿԻ ԲԱԳԻԿԻ ԿԱՐԻՆԵՏ

ԲԱՐՁՐԱՑՄԱՆ · ԻԶԵՑՄԱՆ  
ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ  
ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ՄԵԶ



ՄԳՏՀ - ԾԱԺԿ - ԱդրՊԳՏՀ  
ԲԱԳՈՒ - 1939 - ՄԱՍԿՎԱ

6 SEP 2013

13045

04 AUG 2018

№ 4617

л. 6.—3—3

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հորափորման համար գործադրվող ընդհանուր ժամանակի մեջ «բարձրացման-իշեցման» ոպերացիաները գլխավոր տեղերից մեկն են բանում և համեռ են նրա մինչև 15 տոկոսին։ Հորափորման ոպտագործելով և շխատանքի ստախանովյան մեթոդները և կիրառելով բոլոր տեխնիկական նորությունները, համառ պայքար են մղում, ձգտելով դոլոտոյի բարձրացման-իշեցման ոպերացիաների ժամանակը կրճատելու և այդպիսով ավելացնելու դուռ փորելու համար գործադրվող ժամանակը։ Հորերի խորության ավելացման զուգընթաց, զոլոտոյի բարձրացման-իշեցման մեկ րեյսի ժամանակը նույն պես ավելանում է, և վորպեսզի հորում բարդություններ չառաջնանան (վլում, ժայթքում և այլն) անհրաժեշտ ե այդ ժամանակաբնթացքը նույն պես կրճատել պայքարելով դոլոտոյի «բարձրացման իշեցման» ցիկլում խնայել ամեն մի վարդյան։

Հորափոր բրիգադները, զաստիարակվելով ամենալավ ստախանովականների փորձով, պետք և ձգտեն քիչ ժամանակ ոպտագործել դոլոտոն փոխելու համար։ Դա կավելացնի փորման արագությունը և ել ավելի կրճարացնի նավթային արդյունաբերությունը։

## ԲԱՐՁՐԱՑՄԱՆ-ԻՇԵՑՄԱՆ ՈՊԵՐԱՅԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀՈՐՈՒՄ

Իմ բրիգադի դոլոտոն փոխարինելու աշխատանքների ցիկլը նկարագրելու, կոկեմ գործիքի բարձրացումից։

### 1. ԼՈՒԾՈՒՅԹԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄ

Ամեն մի փորումից հետո, դոլոտոն բարձրացնելուց առաջ հորափոր ը պետք է հորի մեջ գտնվող կավալուծույթը հավասարեցնի։

Խմբագիր՝ Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ  
Տել. խմբագիր և սրբազրիչ՝ Յ. ՌԱՄԻԿՅԱՆ  
Թարգմանեց ինժ. Զ. ԳԵՂԱՄՅԱՆ



868  
39

Сдано в набор 1/XI 1938 г.

Подписано к печати 25/XII 1938 г.

1<sup>1/4</sup> печ. лист. 61.805 тип. знак.

Главлит 7548

Заказ 2711

Тираж 500

Типография „Красный Восток“, Баку, улица Юного пионера, 84.

Լուծույթը հավասարեցնել դա նշանակում է հորի յերկարության ամեն մի կետում, միևնույն տեսակարար կշիռի լուծույթ ունենալ:

Լուծույթի այդպիսի հավասարեցումը պահանջվում է գլխավորապես նրա համար, վոր հաճախ հորափորը, փորման ժամանակ, չուր և ավելացնում կավալուծույթին և այդ պատճառով փորող խողովակների վերի մասերում նոսրացած լուծույթ և ստացվում, մինչեւ ներքին մասերում և առանձնապես փորող խողովակների հետևում, գտնվում է մեծ տեսակարար կշիռ ունեցող լուծույթ:

Հետեվաբար յեթե կավալուծույթը հավասարեցրած չե, գործիքը բարձրացնելիս, խողովակները շուր տարու ժամանակ, կարող ե խողովակներից ավելի շատ կավալուծույթի լցվել (հորափորների լեզվով—սիֆոն), իսկ այդ կիսանդարի գործիքի արագ բարձրացմանը:

Այդ պատճառով վորպեսզի կանխել կավալուծույթի հոսանքը, ստանուկը և հորի հատակը մաքուր պահել, ապա նայել «ցեխային յուրկան» հագնելու ժամանակը կրծատել, վորի համար պահանջվում է 10-ից մինչև 20 վարկյան, անհրաժեշտ և կատարել հետեւալը:

Դորոտոյի բարձրացումից մոտովորապես ժամ ու կես առաջ, յերբ հորափորն զգում է, վոր դոլոտոն բթացել և և շուտով կլոստենա այն դուրս հանելու ժամանակը, անհրաժեշտ և դադարեցնել կավալուծույթի մեջ շուր լցնելը, այսինքն դադարեցնել լուծույթի նոսրացումը, կարելի յե նորոյնպես գործիքը բարձրացնելուց առաջ, փորող խողովակները մղել ավելի ծանր կավալուծույթի և դա հնարավորություն կտա հետագայում բոլորովին հանդիսատ աշխատել, չվախենալով լուծույթի շատ լցվելուց:

## 2. ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Լուծույթի հավասարեցման ժամանակ, բարձրացման պրոցեսի անընդհատ աշխատանքի համար անհրաժեշտ և ստուգել ամբողջ սարքավորման կանոն սվորությունը:

Դրա համար հարկավոր և ստուգել բոլոր շղթաները, արգելակները, մեքենայական բանալիները, ելեկտրոները, տալի կանատները և այլն:

Ինչում և կոյանալու ստոգումը և ինչպես պետք և այդ աշխատանքը բաժանել հերթափոխության աշխատողների մեջ, այդ մասին կասվի ներքելում:

## 3. ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՂՈՒՄԸ

Քիչ ժամանակ ծախսելու, աշխատանքը թեթեվացնելու և սարքավորումը պահպանելու համար վորպիս կանոն, պետք և յուղել ստանովի բոլոր շղթաները, մեքենայական բանալիները, վորպեսզի նրանք ազատ փակվեն և բացվեն, յուղել ելեկտրոները, վորպեսզի վերխովոյը ճիշտ և արագ աշխատի, և տալի կանատը ծծեցնել քսելու յուղով (մազութով) յեթե այդ կարեոր եւ հետևում է:

## 4. ԱՇԽԱՏԱՑԵՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Գործիքը բարձրացնելուց առաջ հօրափորը պետք է աշխատատեղն այնպես նախապատրաստի, վոր աշխատանքի ժամանակ նա լինի չոր, մաքուր և ծանրաբեռնված չլինի ամեն տեսակ մանր գործիքներով: Յեթե այդ բոլորը չկատարվի, յուրաքանչուր ոպերացիայի վրա ավելի շատ ժամանակ կզնա, քան թե հարկավոր և, բացի այդ, կարող են տեղի ունենալ գժբաղդ դեպքեր, յերբ աշխատողները վայր են ընկնում միծ ջարդվածքներ և փասվածքներ ստանում, յեթե սոտորի մոտ թափած են չժողովված քառակուսի (ոռոտրային) ներդիբները, մուրճերը, ելեկտրոները, վորոնց վրայով անցնելիս հեշտ կարելի յե սայշաքել:

Հօրափորը պատասխանատվություն և կրում հօրի գործիքների և բոլոր սարքավորումների կանոնավոր դասավորման (բուռնցքային մուֆտերի ներառման և անջատման) պետակների աշխատանքի, արգելակային բնատաների ձգչան, ստանովի յւրման, Զալիքնի անվտանգ կոճի կանոնավորության համար: Նա ստուգում և դրելումետրի աշխատանքի կանոնավորությունը հայտնաբերված պակասությունների մասին, վորոնք պահանջում են կանչելու փականագործին, մոնտայորին, հյուսնին և այլն, անմիջապես գեկուցում և վարպետին:

Հօրափորի ոգնականն ստուգում և շղթաները, կանատների յերկարությունը, և ապահովությունը, մեքենայական բանալիները, նրանց հօրիղունականությունը, հավասարակշռությունը և յուղումը:

Ստուգում և Զալիքնի շրջանային բանալիի աշխատանքի պատրաստ լինելը, նախապատրաստում և ձեռք՝ գործիքները և ստուգում և ելեկտրոների աշխատանքը:

Բանվորը պատասխանատու յե յուղման և փականքների փոշակների վրձինների համար, կանատիկների և շարոպների շպիլշկաների լավորականության, ջրի շանդի կանոնավորության համար և նախորոք պատրաստում և սանդուխքն ու սայլակը: Յուղում և բանալիները, ելիվատորները, վերեվի մեքենական բանալիի դարձյակիլը, վորպեսզի նրանք հորափոր գործիքը բարձրացնելիս անարգել աշխատեն: Պատասխանատու յե հորմաքրությանը, հորի հատակը, կամուրջիկները, վահանները ցեխից մաքրում և թիակով ու քերիչով, դրանք լվանում և ջրով:

Վերխովոյը մաքրում և յերթի սանդուխքները և պարատների կամուրջը և սվեչանները բռնելու համար պատրաստում և կեռը, փայտե չափածողը ելիվատորները դարձնելու, պատրաստում և թոկերը և տախտակավոր մեջդրումները սվեչայի շարժերը բաժանելու և ստուգում և սվեչայի պատվանդանի սարքին լինելը:

Հերթափոխության ամեն մի մասնակից, առանձին գործողություններ կատարելիս ճիշտ գիտե վոչ միայն յուր տեղը, այլ և շարժումների կարգը: Սարքավորման և գործիքների կանոնավոր տեղադրության հիման վրա, աշխատանքի պարզորոշ կազմակերպության և հերթափոխության ուժերի գասավորմամբ և Զալինի անվտանգ կոճի ու շրջանային բանալու կանոնավոր ոգտագործումով, լիբյոդկայի բոլոր արագությունների և ելեքտրոմոտորի կարողության ոգտագործմամբ, կարելի յե հասնել բարձրացման իջեցման ոպերացիաների նորմաների կատարման ավելի լովուցանիշների:


Դրա հետ միասին անհրաժեշտ և հաշվի առնել մեքենական ժամանակի կրճատումը, վորը փոքր դեր չի խաղում բարձրացման իջեցման ոպերացիաների ժամանակի ընդհանուր հաշվեկշռում:

Ինդուկտորի վրայի ատամնանիվի կանոնավոր ընտրությունը, տալի մեխանիզմի թիվը, ինչպես նաև ժամանակին մի արագությունից միուսը փոխադրելը ձատությամբ վորոշում և մեքենական ժամանակի կրճատման խնդիրը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գործիքը բարձրացնելուց առաջ, հորափորն ոպերացիաների ճշշտ կատարման համար, խնամքով հրահանգում և հերթափոխության մասնակիցներին, վորից հետո հորափորի ցուցմունքով, նրանք բռնում են իրենց ահղերը:

Յերբ սվեչան շուռ և տրված և տեղեղորված և պատվանդանի վրա, հորափորն ելիվատորվ տալային բլոկն իջեցնում և սոտորի վրա: Ելեվատորը ոստորից 1,5 մետր տարածության վրա գըտնվելիս, հորափորը տալիս և «ուշագրություն» աղդանշանը, ելե-



Նկար 1.

վատորը մոտորից մեկ մետրի հասնելիս, հորափորն արգելակով դանդաղեցնում և սահուն նստեցնում է բռտորի վրա: Հորափորի ողնականը և բանվորը վեր մեկնած ձեռքերով, վերցնում են շտրոպները, ուղղում են դատարկ ելիվատորը մուֆտի մոտից ոտորացին շղթայի վահանի կողմը ոտորի վրա և հանում են սեղիկները: Ելեվատորը ոտորին նստեցնելիս միաժամանակ

խլում են շտրոպներն արագ շարժումով տեղափոխում են նրանց բեռնավորված ելեվատորի բներին (շտրոպները փոխադրում են 5 վարկյանում) և սեպիկները հագցնում են ելեվատորի ականջներին:

Յերբ շտրոպները հագցրված են բեռնավորված ելեվատորների բներին, հորափորը սահուն կերպով միացնում է ներթական արագությունը, հետեւելով չափողական գործիքներին, ինչպես նայել բլոկի և սվեչայի բարձրացմանը հորից:

Հորափորի ոգնականը և բանվորը սվեչան բարձրացնելու ժամանակ բաց են անում ազատ ելեվատորը և մոտեցնում են սվեչային. նրանք լիցքի յմն պատրաստում մեջենական բանալիները և գննում են խողովակները՝ նրանց արտաքին պակասությունները հայտաբերելու համար:


Հորափորի ոգնականը և բանվորը դեռևս մինչև սվեչայի մուֆտի յերեվալուն 4—6 մետր մնացած, մոտենում են ոռոտորին, ըստ վորում ոգնականը ձախ վոտքով հենվում և ոռուրային զլանի առանձքականների պատյանին, իսկ բանվորը սանձիկն աջ ձեռքում բռնած պատրաստվում է ներթելի մեջենական բանալու լիցքին:

Սվեչայի մուֆտի յերեալուց 1—1,5 մետր մնացած հորափորի ոգնականը ձախ ձեռքով բռնում և բանալու կոթից և մոտեցնում է սվեչային: Հենց վոր մուֆտը յերեսում է, հորափորը դանդաղեցնում է մոտորների ընթացքը: Յերբ մուֆտն ելեվատորից 15—20 սանտիմետր վեր և բարձրացած, նաև կանգնեցնում է մոտորը և սեղմում ե արգելակը: Առանց բանալիները բաց թողնելու, հորափորի ոգնականը և բանվորը կրանում են, այդ ժամանակ ոգնականն աջ ձեռքով վերցնում է ելեվատորի դռան կոթը և ձգում է բանալին ու ելեվատորը հրում և սվեչայի վրա, իսկ բանվորը ձախ ձեռքով վերցնում է ելեվատորի դռան կոթը, ելեվատորը ձգում է սվեչայի վրա և փակում է ելեվատորը:

Դրանից հետո հորափորը սահուն կերպով սվեչան իջեցնում է ելեվատորի վրա: Հորափորի ոգնականը և բանվորը հերթով փակում և հետ են տալիս մեջենական բանալիները (վերելի և ներքեմի):

Յերբ բանալիները լցված են և հետ են տրված, հորափորը մոտորների հետ ընթացքով միացնում է Զալկինի անվանով կոճը և սվեչան աղատված է. հետո նա միացնում է առաջ ընթացքը

և ոռորորով սվեչան հետ և պտուտակում: Հորափորի ոգնականը բաց ե անում և սվեչայից զցում ե ներքելի բանալին: Յերբ մեկ յերկու փորակի թեւերը դեռ յևս մնում են չարձակված, հորափորը տալիս է հանդարյալ ընթացք, միացնում է արագությունը և սվեչան լրիվ արձակում է: Այդ մոմենտին բանվորն անցնում




Նկար 2.

և պողավեչնիկի մոտ, պատրաստվելով սվեչան ընդունելու, կեռը վերցնում է ձախ ձեռքը, իսկ աջ ձեռքով բռնում է ներքեմի բանալինի սանձիկը և այդպիսով հանդարդեցնում է բանալիի որորումը: Ձախ ձեռքով նա կեռն անց է կացնում սվեչային: Այն բանից հետո, յերբ սվեչան ճիշտ և պտուտակված, հորափորը փոքր ինչ բարձրացնում է այն\*, հորափորի ոգնականը բաց ե անում և շպրտում է վերելի բանալին և սվեչան իրում և պողավեչնիկի վրա:

\* Ծանոթություն.—Սվեչայի բարձրացումն առաջ է գալիս վերամբարձ կեռի դպանակի բացակայությամբ, վորի միջոցով սվեչան իրեն պետք է գուրս գա մուֆտից: Վերոհիշյալ զսպանակների բացակայությունը ժամանակի ավելորդ ծախսում է առաջացնում սվեչան մուֆտից հանելուց:

Բավորը բանալին բաց և թողնում և սկզբան քաշում և պողա-  
սկզբանիկի վրա:

Յերբ հորափորն արգելակն արձակում և, նրանք միասին  
սկզբաները դարսում են շարքով:



Նկար 3.

Վերիովյը սկզբան թոկով բռնում և և ձգում և այն դեպի  
մատի ցցվածքը (տես ն'ար 3):

Յերբ սկզբան տեղադրված և պողավէչնիկին, ընթացքում բաց  
և անում ելեվատորը և ելեվատորն սկսում և շարժվել խողովակի  
վրայով:

Անմիջապես ձգում և սկզբան մատից: Ողղություն և տալիս  
տալային բլոկին, վոր վերջինս չդիպչի մատին: Սկզբաները կանգ-

նեցնում ե շարքով: Սկզբաների շարքերի մեջ գնում և վայտե  
միջնադիրներ, վորոշ կարգ պահպանելու համար: Հորափորի ող-  
նականը և բանվորը պատրաստվում են եւելվատորն ընդունելու  
և շտրոպները փոխադրելու: Յերբ տալային բլոկը մատներից  
ներքով և գտնվում, հորափորը լիովին արձակում և արգելակը:  
Ռոտորի պոտուն միջոցով նա և եվատորը գնում և ռոտորային  
շղթայի վահաններին զուգահեռ:

Յերբ սարքավորումները և գործիքը կանոնավոր դասավորված  
են, մոտորների հզորությունը լիովին ոգտագործվում և, յերբ  
աշխատանքը վ ըոշակի կազմակեպված և և հերթափոխության  
ուժերը կանոնավորված են, մեկ սկզբան բարձրացնելու աշխա-  
տանքի ամեն մի ելեմենտի վրա ժամանակի ծախսումը կլինի  
հետեւյալը՝

1. Շտրոպների փոխադրությը—5 վարկան:

2. Սկզբան ի բարձրացնումը.

I.	Արագություն . . . . .	140	վարկան
II.	» . . . . .	87	»
III.	» . . . . .	52	»
IV.	» . . . . .	35	»

Միջինը . . . 75 վարկան:

3. Շարնիրային բանալ'ների լիցքը . 4 »
4. Սկզբայի հաստատումը և հեռ պտու-  
տակութը . . . . . 14 »
5. Սկենչայի տեղ ողբումը պողավէչ-  
նիկին . . . . . 10 »
6. Դատարկ ելեվատորի իջեցութը . 18 »

Միջին հաշվով մեջ սկզբան բարձրացնելու համար ընդամենը  
ծախսվում և 2,1 ըոպե: Բարձրացում-իջեցութ ողերացիաների  
նորմաների կատարման ապահովման համար, հորափորման սար-  
քավորման կարողության լույսին և ճիշտ ոգտագործման գեպ-  
քում, հորափորը պետք և հաստատ իմանա, վոր փոխադրություն-  
ներում, ինչ արագությունն ըստ և իշխ քանակությամբ սկզբաներ  
և սահմանված բարձրացնելու:

Յ՞ ԳՈՐԾԻՔԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Առաջին, քանակը	15/19	17/19	18/19	15/27	18/27	Սուբքուր.
Արագու- թյուն						
Բարձրացվող սկզբերի քանակը						
I	108	94	89	141	115	
II	54	47	47	78	67	4×5
III	27	23	23	39	39	
IV	17	14	14	23	20	

«ԶԿԱՆ ՊՈՉ» ԴՈՒՇՏՈՅԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

«Զկան պոչ» դոլոտոյի արագորեն փոխարինումն ապահովելու համար, անհրաժեշտ է կատարել հետևյալը: Դոլոտոն (ինչպես «Զ. Պ.» նույնական և «Զ. Դ.») պետք է պատրաստվի, հորափորի ցուցումներով, հորափորման ժամանակ, այսինքն պետք է սառուցեն դոլոտոյի լվացման ծակերը (կալնված չեն՝ արդյոք), մաքրեն և դոլոտոյին փորակը յուղի, կոլպակը հազցվի փորակի վրա և դրվի դոլոտային փոսը (նկար 4): Գործիքը բարձրացնելիս—հորափորը կարգադրում է իր ոգնականին պատրաստել դոլոտային տախտակը, դոլոտոն հետ պատեցնելով հանելու և հազցնելու համար: Վերջին սկզբան դոլոտոյի հետ միասին բարձրացնելիս հորափորի ոգնականը և բանվորը հանում են ելեվաստորը ոռտորից և դնում հատակին, բանվորը վերցնում է ներքին խարիսխը և կամարաձև ձանկը տեղավորում և այն ոռտորային ներդիրի մեջ և կցում է խարիսխով:

Հորափորի ոգնականն աշխատելու յև անցնուած կոճի վրա, խարիսխով բարձրացնում է ներդիրը, իսկ բանվորը ոռտորից մի կողմ և հեռացնում այն և դնում հասակին: Միենալու ողերացիան կատարվում է յերկրորդ ներդիրի հետ: Այնուհետև բանվորն անջատում է խարիսխը, հանում և ձանկը, դնում այն նրա համար վորոշված տեղը:

Այդ միջոցին հորափորը բարձրացնում է սվեչան դոլոտոյի հետ միասին, բանվորը վերցնում է խարիսխը և նրանով կցում ե դոլոտային գախտակը, իսկ հորափորի ոգնականը բարձրացնում



Նկար 4.

և նրան կոճի վրա խարիսխով, այնուհետև բանվորը դոլոտային գախտակն ուղղում է հորի վրայի ոռտորի անցքին:

Ցերք հորափորի ոգնականը խարիսխն անջատում է, բանվորը տեղավորում է այն ոռտորում: Հորափորի ոգնականը մտահենում ոռտորին և բանվորի հետ միասին ձեռքերով բռնում են սկզբանցից ու դոլոտոյի հետ միասին ուղղում են նրան տախտակի կտրվածքին:

Հորափորն արձակում եւ արգելակը և դոլոտոն ավեշայի հետ միասին սահուն կերպով իջեցնում եւ, իսկ բանվորն այդ միջոցին փակում եւ սոտորը, վորափեսղի վերջինս չպտտվի: Հորափորի ողնականը ձախ ձեռքով վերցնում եւ վերի բանալին, մոտեցնում և հաղցնում եւ նրան ուղինիտելի վրա և հետ եւ քաշում: Հորափորը մոտորի հետ ընթացքով միացնում եւ Զալինի կոճը և դոլոտոն անջատված եւ Բանվորը բարձրացնում եւ սոտորը, հորափորը միացնում եւ մոտորի առաջ ընթացքը և սոտորը հանում եւ գոլոտոյի ուղինիտելից:

Յերբ դոլոտոն հանված եւ, բանվորը յերկորդ խուսին եւ պատրաստում, հորափորը սվեշան ուղինիտելով փոքր ինչ վեր և բարձրացնում դոլոտոյից: Բանվորը դոլոտոյի պիտկայի վրա անց եւ կացնում խուփը, վերցնում եւ խարիսխը, կցում եւ խուփի ականջիկին, իսկ հորափորի ոգնականը խարիսխով կոճի վրա բարձրացնում եւ դոլոտոն, վորից հետո բանվորը հեռ ացնում եւ այն մոտորից գեպի սոտորի կամուրջիկների կողմը: Հորափորի ոգնականը սահուն կերպով իջեցնում եւ դոլոտոն խարիսխի վրա, խարիսխն ազատվելուց բանվորը բաժանում եւ նրան և այդ միենույն խարիսխով բանում եւ պատրաստված նոր դոլոտոն, վորը գտնվում եւ դոլոտային փոսում: Հորափորի ոգնականը կոճի ոգնությամբ խարիսխով բարձրացնում եւ գոլոտոն բոտորի մակարդակից վեր, իսկ բանվորը դոլոտոն սոտորի վրա գտնվող տախտակի կտրվածքին եւ ուղղում:

Հորափորի ոգնականը սահուն կերպով իջեցնում եւ նրան, իսկ բանվորը դոլոտոն տեղադրում եւ դոլոտային տախտակի կենտրոնով:

Խարիսխն ազատելիս, վերջինս բաժանվում եւ մի կողմն և դրվում:

Հորափորի ոգնականը և բանվորը մոտենում են սոտորին, յերկու ձեռքերով բոնում են ուղինիտելից և ուղղում նրան գեպի դոլոտոյի պիտկան:

Այդ ժամանակ հորափորն ազատում եւ արգելակը, սահուն կերպով սվեշան ուղինիտելի հետ միասին իջեցնում եւ դոլոտոյի պիտկայի վրա, բանվորն աջ ձեռքով վերցնում եւ ներքին բանալին, լարում եւ ուղինիտելը լցներով հետ եւ տալիս:

Հորափորը մոտորի հետ ընթացքով միացնում եւ սոտորը և հակառակ ընթացքով սոտորով պտտում եւ դոլոտոն, պտտատակ-

ման վերջում ոստորի հրոցով յերկու յերեք անգամ խփում եւ դոլոտոն վերջնականապես ամրացնելու համար: Այսուհետեւ մոտորը կանգնեցնում և անջատում եւ ոստորը: Հորափորի ոգնականը և բանվորը լցանանում և ներքին բանալին հանում են ուղինիտելից:

Հորափորը բարձրացնում եւ պտուտակված դոլոտայով սվեշան սոտորից, դոլոտային տախտակից 1—1,5 մ: վեր:

Բանվորը վերցնում եւ խարիսխը կցում եւ դոլոտային տախտակը, հորափորի ոգնականը կոճի վրա խարիսխով բարձրացնում նրան սոտորից և բանվորը սոտորից մի կողմ եւ հրում տախտակը, վորպեսղի նա փորող խողովակներն իջեցնելու ժամանակ չըխանգարի: Հորափորի ոգնականը սահուն կերպով իջեցնում եւ նրան և ազատում եւ խարիսխը, այսուհետեւ բանվորի հետ միասին մոտենում են սոտորին ձեռքերով բոնում են սվեշայից և ուղղում են նրան դեպի հորի բերանը:

Հորափորն ազատում եւ արգելակը, սահուն կերպով դոլոտոյով իջեցնում եւ հորը մինչև սվեշայի կեսը և սեղմում արգելակը: Բանվորը վերցնում եւ կամարեծել ճանկը և խարիսխը, կցում եւ սոտորային ներդիրը, հորափորի ոգնականը խարիսխով կոճի վրա նրան սոտորից 0,1 մետր վեր եւ բարձրացնում: Այդ նույն ժամանակ բանվորն ուղղում եւ նրան սոտորին:

Հորափորի ոգնականը սահուն կերպով սոտորն եւ իջեցնում ինչպես առաջին նույնպես և յերկորոր ներդիրը: Բանվորը բաժանում եւ խարիսխը, հանում եւ ճանկը ներդիրով և դնում եւ նրան իր տեղը: Հորափորն ազատում եւ արգելակը, իջեցնում եւ սվեշան և սահուն կերպով նատեցնում եւ այն ոստորի վրա: Բանվորը վերցնում եւ խարիսխը, բոնում եւ հատակից ելեվատորը, հորափորի ոգնականը կոճի վրա խարիսխով բարձրացնում և դնում եւ այն սոտորի վրա: Դոլոտոն փոխարինելու ողերացիան ավարտված եւ: Դոլոտոն փոխարինելու այդ ամբողջ աշխատանքի ելեմենտների վրա ծախսվում է ամենաշատը՝ 5—7 բոնե:

## ՓՈՐՈՂ ԳՈՐԾԻՔԻ ԻՉԵՑՈՒՄԸ

Հերթական սվեշայի իջեցման ժամանակ, յերբ ելեվատորի տարածությունը սոտորից 1 մետր եւ, հորափորն արգելակի աստիճանաբար սեղմումով՝ դանդաղեցնում եւ լեռողլայի թմբուկի պտույտը:

Հորափորի ոգնականը և բանվորն աջ ձեռքով վերցնում են շարոպների ներսում սարքված թոկից բաղկացած հյուսվածքից, ձախ ձեռքով պահելով ձողիկը և սպասում են ելեվատորի նստելուն:

Հորափորը սահուն կերպով ելեվատորը նստեցնում է ոստորին: Հորափորի ոգնականը և բանվորը շտրոպները պոկում են բեռնավորված ելեվատորն՝ թից և միաժամանակ կտրուկ շարժումով տեղափոխում են նրանց յերկրորդ ելեվատորի բները:

Հորափորը միացնում է չորրորդ արագությունը, հորափորի ոգնականը և բանվորը ձողիկները մտցնում են ազատ ելեվատորի ականջները:

Հորափորը հետեւում է ելեվատորի բարձրացմանը: Հորափորի ոգնականը ելեվատորի բարձրացման առաջին մոմենտին ելեվատորը բաց դոնակով ուղղում է գեղի վերխովոյի կողմը: Բանվորը պատրաստում է Զալկինի բոլորակային բանալին, զցում է այն սվեչայի փականքային մուֆտի վրա, վորը գտնվում է ոստորում և յեշներով ոստորի վրա, փակում է փականը:

Հորափորի ոգնականն անցնում է գեղի բոլորակային բանալիի կանեփի կանատը, հյուսվածքը քանդելով կարգի յերեսում այն և դնում է կոճի մոտ գտնվող հատուկ մատի վրա: Բանվորը բանալիի աջից ձախ պտտեցումով կանատը 6—7 վոլորումով փաթաթում է բանալիի վրա: Վերցնում է վրձինը և իննամքով յուղում է փորակը և մուփտի ուսիկները: Հորափորի ոգնականը դնում է գեղի պողավեչնիկը, կեռով վերցնում է մատուցման համար հերթական սվեչան:

Յերբ կեսի ողը հավասարվում է մատներին, հորափորը դանդաղեցնում է մոտորի ընթացքը:

Վերխովոյը հերթական սվեչան պտտում է կանեփի կանատով, առաջ և քաշում նրան մատից այնքան, վոր նա, կախվելով կանատի վրա, հավասարվի մատի արտաքին կողմի հետ: Կանատի ազատ ծայրը յերկու վոլորումով փաթաթում է կամուրջի վերի ճաղաշարքի շուրջը:

Ճաղաշարքի վրայից թեքվելով, աջ ձեռքով բոնում է ելեվատորի դոնակի կոթից: Իր մոտ քաշելով ելեվատորը, ձախ ձեռքով արագությամբ բռնում է նրա յերկրորդ կողմը և յերբ ելեվատորը գտնվում է կրծքի մակարդակին, արագ շարժումով ելեվատորը ձգում է սվեչայի վրա և փակում նրան:

Հորափորը հետեւում է վերխովոյի աշխատանքին և շարունա-

կում ելեվատորի բարձրացումը: Հորափորի ոգնականն սպասում է սվեչայի պողավեչնիկից բաժանվելուն: Մոտորի վրա կանգնած, բանվորը պատրաստվում է սվեչան ընդունելու և մուֆտն ուղղելու:

Մղլակելով ելեվատորը սվեչայի վրա, վերխովոյը վերցնում է կանեփային կանատի ծայրը և ազատում է ձգված հանգույցը: Յերբ ելեվատորը մուփտի հետ շփում է, նա թուացնում է կանատի վոլորումները և սահուն կերպով սվեչան իջեցնում է ոստորին: Սվեչան բաժանվում է պողավեչնիկից և նրա պիտկան հանում և սվեչայի մուփտի մակարդակին, վորը կանգնած է ոստորում: Հորափորն անջատում է մոտորը, ընդհատում է հետապա բարձրացումը և աջ ձեռքով սեղմում է արգելակը:

Հորափորի ոգնականը, բռնելով սվեչան իր առաջ, ուղղում է նրա պիտկան սվեչայի մուփտի մեջ (նկար 5): Հորափորն ազատելով արգելակը, իջեցնում է սվեչայի պիտկան մուփտի մեջ: Բանվորը փոքր ինչ բարձրացնում է բոլորակային բանալին փաթաթվելիք սվեչայի պիտկայի վրա և սուխարսեկտորի շըրջադառվ լարում է բանալին խողովակի վրա, հետ վազելով գեղի վահանի կողմը:

Այդ ժամանակ հորափորը կանեփային կանատի մեկ վոլորակ զցում է կոճի վրա և ձգում բոլորակային բանալին: Հորափորի ոգնականը լիցքի յերեսում մեքենական բանալիները առաջին 10—15 սվեչաներն ամրացնելու համար: Բոլորակային բանալիի սուխարը լցված է: Հորափորը մոտորը միացնելով և կանատի յերկուսից մինչև յերեք վոլորակ կոճի վրա ավելացնելով, փաթաթում է սվեչան: Բանվորը փականակի կոթը շուռ և տալիս վեր, բանալին ընկնում է ելեվատորի վրա և բացվելով, կանատով քաշվում է հատակին:

Հորափորն ազատում է կոճից բոլորակային բանալու կանատը և դնում է նրան մատի վրա: Հորափորի ոգնականը և բանվորը մեքենական բանալիներն ամրացնելու համար: Բանալիները լցված են: Հորափորը մեքենական բանալու կանեփային կանատը զցում է կոճի վրա և պնդացնում սվեչան, վորից հետո կանատը կոճից դեռ և ձգում: Վերխովոյը հետեւում է ելեվատորի շնիկին և եթե շնիկը բացվում է «կանգնիր» աղաղտկելով կամ սվեչային զարկելով, նախազգուշացնում է հորափորին:

Հորափորի ոգնականը և բանվորը լցա՛տնում են մեքենական բանալիները: Սվեչան ամրացված է:

Հորափորը կոճի վրա աշխատելուց հետո, դանդաղեցնում և մոտորի լնթացքը և միացնելով բռունցքային մուֆտը փոքր ինչ



Նկար 5.

բարձրացնում ե գործիքը: Բանվորն ելեվատորի շնիկը ձգում ե վեր, հորափորի ոգնականը բացում ե ելեվատորի դռնակը և յերկուսը միասին հետ են քաշում ելեվատորը, տեղավորելով նրան ոստորախն շլթայի վահանին զուգսենու: Հորափորն իջեցնում ե գործիքը: Յերբ տալային բլոկը ծածկվում ե մոտորի հետեւ, վերխավոյը դնում ե հերթական սվեչան մոտորի դուրս ցցվածքին:

Փորող գործիքի իջեցման բոլոր ոպերացիաների կատարման ամեն մի ելեմենտի վրա առանձին ծախսվում ե ժամանակի հետայալ քանակությունը:

Շտրոպների փոխադրումը . . . . .	5 վարկան
Դատարկ ելեվատորի բարձրացումը . . . . .	» 30 »
Ելեվատորի կցումը սվեչային . . . . .	» 3 »
Սվեչան բոտորի մոտ բերելը և նրա ուղղումը մուֆտի մեջ . . . . .	» 10 »
Սվեչայի փաթաթումը և ամրացումը . . . . .	» 20 »
Սվեչայի իջեցումը . . . . .	» 22 »

Այսպիսով մեկ սվեչայի իջեցման համար ծախսվում է 1,5 բոպե: Մինչև բարձրացում-իջեցում ոպերացիաների սկիզբը, ամբողջ հերթափոխությունը պետք է խնամքով նախապատրաստվի և վերացնի բոլոր այսպես կոչված «մանր» պակասությունները, վորոնց վրա սովարաբար քիչ ուշագրություն և դարձվում:

Փորելու սարքավորման և գործիքի դասավորման ու տեխնիկական դրության մասը թերությունների ժամանակին վերացումը հերթափոխության աշխատանքներին արագ և անընդհատ տեմպ և աշխատանքի բարձր արտադրողականություն և ապահովում: Այդ անհրաժեշտ պայմանի հետ միասին նույնպես կարեվոր ե ոգտագործել լերյուկայի բոլոր արագությունները և ելեկտրոսմունքների կարողությունը, սակայն, առանց վերջինների գերաբեռնավորման, վորեվիճետե դրանից կարող ե առաջանալ ներդիրների այրում կամ ելեկտրոսմուրի շարքից գուրս գալը, վորը կհասցնի յերկարատեղ կանգ առման և բարձրացում-իջեցում սպերացիաների նորմաների չկատարման:

Վերջապես, վորպես կանոն, պետք ե պահպանվի աղմկի, վաղվագցի և ավելորդ անկարգ շարժումների լիակատար բացակայությունը, վորն այնքան բնորոշ ե շատ հորերի համար գործիքի բարձրացում-իջեցում աշխատանքի ժամանակ:

Կիրառելով նկարագրած մեթոդները, հորափորման աշխատողներն զգալի չափով կիրացատեն գոլոտոյի բարձրացման-իջեցման ժամանակի ծախսումը և կտան այն ամբողջովին հորափորման, հենց դրանով, արագացնելով հորի ավարտման ժամկետը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱՑՈՒՄ-ԻԶԵՑՈՒՄ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ ՀՈՐՈՒՄ

1. Լուծույթի հավասարեցում	3
2. Սարքավորման կանոնավորության ստուգում	4
3. Սարքավորման յուղումը	5
4. Աշխատատեղի նախապատրաստումը	5
Աշխատանքի կազմակերպ լում	6
«Զին պոլ» դպրուոյի փոխարինումը	12
Փոբոզ գործիքի էջեցումը	15



«Ազգային գրադարան»



NL0279871

ԳԻՒԾ 40 ԿՈՊԵԿ

13045

73

**А. К. ФИРСОВ**

**Начальник буровой  
треста Сталиннефть**

**ОРГАНИЗАЦИЯ  
СПУСКО-ПОД'ЕМНЫХ  
ОПЕРАЦИЙ В БУРЕНИИ**



**АЗГОНТИ  
Баку—1939—Москва**